

ԳԵՊԻ ՖԻՍՆՍԱԵՒ ՄԻՍՅԵԱԼ ՆՈՂԱՆԳՆԵՐԸ

Արեւելքէն վերջ Արեւմուտքի մէջ է որ եռուզեռ մը կայ պատուելու Մխիթար Արքահայրը իր մահուան Բ. դարադարձին:

Մեծաշուք հանդէս մը կը կատարուէր Մուրատեան վարժարանին մէջ ուր փութացեր էր Գերպ. Արքահայրը Արեւելքէն իր ուղևորութենէն վերադարձին:

Յունիս 11 էր: Պէշկիթաշեան Սրահը խոնուած էր հայ բարեկամներով: Հանդէսին կը նախագահէր Գնդապետ Սուար՝ իրր ներկայացուցիչ Յրանս. Հանր. Նախագահին. ներկայ էին Փրանս. Ակադե-

մականներ, զինուորականներ՝ Ծովակալ Ֆենար, Գնդ. Միրայէ, նախկին Նախարար Ժ. Կոտար, բարձրաստիճան եկեղեցականներ՝ որոնց մէջ նաեւ Պապական Նուիրակ Գերպ. Ռոնքալլի:

Կը բանախօսէր Ժ. Կոտար, չեչտելով Մխիթարի դործին դերը հայ վերածնունդին մէջ:

Փակման դեղեցիկ խօսքեր կ'արտասանէր Գերպ. Արքահայրը՝ ներկայացնելով կրօնքի եւ դիտութեան մեծ առաքելին կեանքն ու դիմագիծը եւ իր առաքելութեան դործած՝ հրաշքը:



Կեդրոնը Գնդապետ Սուար Յրանս. Հանր. Նախագահին ներկայացուցիչ, իր աջին՝ Գերպ. Ռոնքալլի՝ Պապական նուիրակ (այժմ Ս. Պապ), Արտաւագդ Արքեպս. Սիրսիլեան, Ժիւսէն Կոտար նախկին նախարար, Էմ. իր ձախին՝ Գերպ. Արքահայր, Գերպ. Գր. Պախապանեան, Յրանս. Ակադ. Պարոն Լըֆոնթ, վերաշինութեան, Ծովային, Արտաքին Նախարարութեանց ներկայացուցիչներ, ազգայիններ եւն. (Մուրատեան վարժարան Միւր, 11 Յունիս 1950)



Առջևի զիծ, ձախէն աջ. - Տիկին Բարեան, Տիկին Փիլիպպոսեան, Կոպեռնիկ Թանոբեան, Գերպ. Արքահայր, Գրիգոր Ֆերահեան եւ իր տիկինը
Ետեւի զիծը (տաքի). - Ճ. Կոկեան, Պէն Ղազարեան, Ալեք Փիլիպպոսեան, Արման Թոֆաբեան, Հ. Բարեան, Զուէն Սիրսիլեան (Պոսքըն 1951)

Մխիթար Արքահայր մահուան կրկնակ դարադարձի հանդէսները ողբերած էին Հայութիւնը: Այդ առիթով էր որ Գերպ. Արքահայրը 1950ի Հոկտեմբերին վերջերը, պանդուխտի ցուպը ձեռքին՝ կ'երթար Նապելութեան Ամերիկայի Միացեալ Նահանգները՝ ովկիանոսներէն անդին հեռուոր մեր նոգեհէ եղբայրներուն:

Գերպ. Արքահայր ներկայութիւնը առիթ կ'ընծայէր պատուելու մեծ Սերաստացին իր յաջորդին մէջ եւ ողբերակելու անոր Միաբանութեան երկուքուկէս դարու զործունէութիւնը (1701-1951) Ամերիկեան հայաշատ զխաւոր կեդրոններուն մէջ ուր այցելեց հեղհեմէ - Նիւ Եորք, Պոսքըն, Ուաթըրթաուն, Ուատը, Ֆիլադելֆիա, Տիւրոյթ, Լոս Անճելըս քաղաքները:

Այդ տեսակէտով տեղւոյն Հայ մամուլը խանդավառութեամբ ողջունեց Արքահայրը՝ բարձր գնահատականներով Միաբանութեան հասցէին:

Հանդիսաւոր ցոյցերուն մէջ որ տեղի կ'ունենային՝ ազնիւ ազգայիններ տուար տուարի վրայ աւելցնելով՝ համեստ դուրս մը գոյացուցին՝ ի նպաստ Մխիթարեանց ազգանուէր ձեռնարկներուն:

Ձենք կրնար հոս ամփոփել քաղաքէ քաղաք անոր ողբերակութիւնները եւ ի դաք անոր ողբերակութեանս կազմակերպուած հանդէսները: Կը բաւէ թրդ-թատել նոյն շրջանի Ամերիկահայ մամուլը, ինչպէս Հայրենիք, Պայքար, Մշակ, Նոր Օր, Հայ կոչակ, եւն. որոնք լայնօրէն արձանագրեցին խանդավառ ճանքով մեծ Հիմնադրին եւ Մխիթարեանց զործունէութիւնը զանազան մարզերուն մէջ:

Իննամսեայ պանդուխտներէ մը վերջ Գերպ. Արքահայրը յաջողութեամբ կը դառնար վեհ եւ տիկ: Միաբանութիւնը խանդավառութեամբ կ'ընդունէր անոր յաղթական վերադարձը՝ առ Աստուած զոհարանական երգերով ու աղօթքներով:

ԿՐԿԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԷՊԻ ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Եւ ահա Գերպ. Աբրահայրը դարձեալ Արեւելք՝ մասնակցելու համար Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան խորհրդակցական ժողովին որ տեղի ունեցաւ 1953 տարւոյ Մայիս 25էն Յունիս 4 օրերուն, Զմմառու վանքին մէջ՝ Լիբանանու բարձունքը, Նախագահութեամբ Վսեմ. Ծիր. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս Պատրիարքին:

Յաւարտ ժողովին, պատուոյ ճաշ մը կը տրուի ժողովական մարմնին, ուսկից յետոյ Գերպ. Աբրահայրը առիթը կ'ունենայ մասնակցելու համազգային հաւաքոյթին ի յիշատակ Հրաչեայ Աճառեանի՝ Պէյրութի Սէն Ժոզէֆ համալսարանին

մէջ, ինչպէս Յունիս 7ին Ս. Փրկիչ եկեղեցւոյ նաւակատիքին:

Այդ բարեպատեհ առիթով, միացած ուրիշ խումբ մը հայ եկեղեցականներու, կայցելէ Ս. Երկիր, յապեցնելու իր բարեպաշտութիւնը փրկչական նուիրական տեղերուն երկրպագութեամբ:

Ս. Երկրէն վերադարձին կ'անցնի Կ. Պոլիս, Հ. Վահան Վ. Յովհաննէսեանի եւ Հ. Հմայեակ Վ. Կէտիկեանի հետ. եւ բարեբախտ զուգադիպութեամբ ներկայ կ'ըլլար Կ. Պոլսի Շիշլիի գերեզմանատան մէջ մեր Հայրերու վերանորոգուած դամբարանի նաւակատիքին:

Յունիս 19ի առտուն կաթողիկէ Աթո-



Գերպ. Աբրահայր մասնակցութիւնը Հայ Կաթ. Նուիրապետութեան խորհրդակցական ժողովին ի Զմմառ (25 Մայիս — 4 Յունիս 1953)



Միտիքարեան Հայրերու շիրիմին առջեւ
Հ. Անտոն Վ. Ճիվանեան, Հ. Յակոբոս Վ. Բոսպոլքեան, Հ. Հմայեակ Վ. Կէտիկեան,
Հ. Վահան Վ. Յովհաննէսեան եւ Գերպ. Աբրահայրը (Կ. Պոլիս, 19 Յունիս 1953)



Գերպ. Աբրահայրը Միտիքարեան եւ Մուրատ-Ռաֆայելեան ճախին սաներու մէջ
Առջեւի գիծը՝ Գերպ. Պօղոս Արքեպ. Քիրէնեան, Գերպ. Աբրահայր, Հ. Գրիգորիս Անեան
Հ. Վահան Յովհաննէսեան (տեսը Հ. Անտոն Վ. Ճիվանեան) Կ. Պոլիս, 25 Յունիս 1953



Աջէն ձախ. - Գերպ. Ուլուխովեան, Տիկին Խաչատուրեան, Սիոն Եպս. Արամ Խաչատուրեան
(Պուէնոս Այրէս, Օգոստ. 1957)

ռանխտ եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցանէ ի հանդիստ մեր վաստակաւոր Հայերուն, որոնց յիշատակը կը նորոգէր Հ. Վահան Վ. ուղեկց քարոզով մը։ Յաւարտ պատարագին կարճ արարողութիւն մը կը կատարէ Գերպ. Արքահայրը յիշեալ գերեզմանատան մէջ ուր հաւաքուած էին նախկին աշակերտներ և հաւատացեալներու բազմութիւն մը։ Հետեւեալ օրերուն տեղի կ'ունենային այցելութիւններ, մտերմական ընդունելութիւն մը նախկին Սաներու Միութեան կողմէն 25 Յուլիան՝ ներկայութեամբ Գերպ. Պօղոս Արքեպս. Քիրէճեանի, Վիեննական Միութեան Հայերու և այլ հայ կաթողիկէ քահանաներու, և Յուլիո ՅԱին մեկնում դէպի Վենետիկ։

Մեր արեւելքի վարժարաններուն կարիքները կը մղէին Գերպ. Արքահայրը դարձեալ Նոր աշխարհ երթալու։

Ու պանդուխտի ցուպը ձեռքին կը մեկ-

նէր 1955ի Նոյեմբեր 7ին, այս անգամ աւելի երկար մնալու հարկադրուած։

Դարձեալ այցելութիւններ Միացեալ Նահանգներուն մէջ քաղաքէ քաղաք, ուր զինքը կը հրաւիրէին և անհատներ ու ազգային մարմիններ կը մրցէին իրարու հետ զինքը պատուելու՝ յատկապէս Պոթոն, Նիւ Եորք, Ուաթթաուն, Տիթթոյթ, Ֆրեզնոյ ևւն. կազմակերպելով հանդէսներ և հաւաքոյթներ։

Հիւսիսային Ամերիկայէն յետոյ Գերպ. Արքահայրը թախանձաղին հրաւիրուած էր Հարաւային Ամերիկա, ուր 1956ին ծընունդ էր առած Պուէնոս Այրէսի մէջ Միութեան վարժարան մը՝ անխոնջ ջանքերով Հ. Ստեփան Վ. Ֆերահեանի և բարերարութեամբ Յ. Տիարպէքերեանի, Մ. Շիրինեանի և Փանոս Էօրնէքեանի։

Եւ ահա Գերպ. Արքահայրը Պուէնոս Այրէս կը հասնէր Յուլիո Գին. իրեն ընդառաջ դացած էին Հ. Ս. Վ. Ֆերահեան



Ակադեմական հանդէսը ի պատիւ Գերպ. Արքահոր (Պուէնոս Այրէս, Օգոստ. 1957)



Գերպ. Արքահայրը և Հ. Ստեփան Վրդ. Ֆերահեան շրջապատուած Միութեան Սաներով



Ձախեն աջ. - փանոս Խորենեան, Գերպ. Աբրահայր, Հ. Ստեփան վ. Ֆերիատեան, Տիկին Aimée di Ramos Mejia, Արամյուրա՝ Նախագահ Արմենքիմայի, Մանուկ Շիրինեան՝ Նախկին սան Մ.-Ռ. վարժարանի (Պուլենոս Այրէս, Օգոստ. 1957)

Միտիթարեան, Նախկին Սաներ եւ բարեկամներու բազմութիւն մը:

Օգոստոս 11ին տեղւոյն Հայ դպրութիւնը ճաշկերոյթ մը սարքած էր իր պատիւ Հայ երաժշտագէտ Արամ Խաչատուրեանի. եւ բարձրաստիճան հիւրերու գլուխ կը բաղմէր Գերպ. Աբրահայրը:

Օգոստոս 23ին Ալվէար փալատ Պանդոկին մէջ ի պատիւ Գերպ. Աբրահայր կը տրուէր ճաշ մը, որուն կը մասնակցէր դպրութիւն ընտրանին:

Օգոստոս 17ին, հրաւիրուած «Հայ Համալսարանական Միութեան» կողմէն Գերպ. Աբրահայրը կը խօսէր «Միտիթարեան վաստակը» նիւթին շուրջ տեղւոյն «Հայ Կեդրոն»ին մէջ:

Իսկ Օգոստոս 25ին, նոյն սրահին մէջ

տեղի կ'ունենար հանդէս-ներկայացում մը Միտիթարեան վարժարանի աշակերտութեան կողմէն ի յարգանս Աբրահայր: Շատ յաջող կ'անցնէր հանդէսը բանաստեղծութիւններով, արտասանութիւններով, երգերով եւ ներկայացումովը դրուագի մը ազգային պատմութենէն:

Նոյն օրը ժամը 12ին Գերպ. Աբրահայրը պատարագ կը մատուցանէր քաղաքին մայր տաճարին մէջ՝ երգեցողութեամբ տեղւոյն Կոմիտաս» երգչախումբի: Քառասուն պատարագը կը ձայնասփռուէր պետական ռատիոկայանէն:

Այդ օրերուն Գերպ. Աբրահայրը մտերմականներէն զատ պաշտօնական այցելութիւններ կ'ընէր Քահանայապետական նշանակութիւն Գերպ. Մ. Ծանինիի, Հարաւային



Փոխ Նախագահը Պրազիլի եւ Գերպ. Աբրահայրը, Նախագահ Լ. Ստեփան վ. Ֆերիատեան, Պրն. Խրլաֆեան Երեսխ. Պրազիլի խորհրդարանին, Պրն. Մ. Խրլաֆեան (խորհրդարան վերջինին), Շատարեան վրդ. (Ս. փալատ, Օգ. 1957)

Ամերիկայի կաթողիկոսական պատուիրակ Սիւրն Արքեպս. Մանուկեանի եւ հուսկ Արճենթինայի հանրապետութեան Նախագահ՝ Զօրավար Փետրոյ Արամյուրուի, որ շատ սիրալիր եւ յարգալիր վերաբերում ցոյց կու տար Գերպ. Աբրահայրը:

Վերադարձը կը մօտենար Գերպ. Աբրահայրը հրաժեշտ կ'անէր իր ընտանիքին, եւ յատուկ սիրով ընտրեալներէն, եւ աշակերտութիւնը Միտիթարեան վարժարանին, մաղթելով որ ան դառնար խկապէս վառարանը ազգային լեզուին եւ նուիրական աւանդութեանց:

Իր ճամբուն վրայ կարճ դադար մը կ'ունենար Գերպ. Աբրահայրը Պրազիլի մէջ ի Ս. փալատ, շատ մեծ եւ յարգալիր ընդունելութիւն եւ պատիւներ ղանելով երկրին փոխ Նախագահին կողմէն:

Դարձեալ թուիզ կ'անէր դէպի Միացեալ Նահանգները. սիրալիր ընդունելութիւնները քաղաքէ քաղաք՝ բարեկամներէ, Նախկին Սաներէ եւ Խորհրդայիններէ, այլեւ ողջերթի բնոյթ ունէին: Չենք մոռնար յիշելու Աբրահայր այցելութիւնը Պոսթընի մէջ Մեհէլուէթ Նախագահի վարիչ Գրիտիան Հերթըրի, որ այդ շրջանին կը հանդիպէր:

Գերպ. Աբրահայր պատմական Ուղեւորութեանց շարքը կը փակենք Պարսկաստանի այցելութեամբ՝ որ հանդիպեցաւ 1958ի վերջերս, թախանձագին հրաւերին վրայ Նախկին Սաներու եւ բարեկամներու:



Քրիստիան Հերթեր՝ Միացեալ Նահանգներու Արտաքին Գործոց Նախարարը և Գերալդ Արքեպիսկոպոսը՝ Նախագահ Ֆրանկլին Դելանոյի հետ Սպիտակ տան Գլխավոր Գրասենյակում (Սեպտեմբեր 1957)

Նա Թեհրան կը հասնէր 21 Դեկտեմբերին խանդավառ ցոյցերուն մէջ բարեկամներու եւ բազմաթիւ ազգայիններու։

1959ի մուտքին Թեհրանի մէջ հանդիսացաւ Կորհնէր եւ կը զետեղէր հիմնաքարը ապագայ Միւթարեան վարժարանի՝ Չիլոյեան բարերար ընտանիքին նուիրած հողին վրայ, ի ներկայութեան Քահանայապետական նուիրակ Գերալդ Լ. Մանինի, իտալական հիւպատոսին, Արհի. Մկրտիչ Նպս. Արքեպիսկոպոսի, Մանուէլ Վ. Փոլատեանի, Յակոբ Վրդ. Ղարապետի եւ Ուխտիս միաբան Հ. Սամուէլ Վրդ. Արամեանի եւ Հ. Աթանաս Վրդ. Քէսէճեանի, Թեհրանի ազգային միութիւններու եւ բազմաթիւ ժողովրդեան։

Միւթարեան Միաբանութիւնն իր խոստումն ըրած էր, եւ հիմնաքարը դրուած։ Կը մնայ որ աղնիւ բարերարներ չէնք բարձրացնեն եւ Միւթարեան վարժարանը կատարէ իր մշակութային եւ բարոյական դերը ի նպաստ Իրանի հայութեան։

Ձանց կ'ընենք յիշել բոլոր պատուասիրութիւնները շուրջուած Գերալդ Արքեպիսկոպոսի լուսնի եղաւ «Միւթարեան Միաբանութեան օր» ակադեմիական մեծ հանդէսը, որ տեղի ունեցաւ նոյն ինքն Արքեպիսկոպոսի նախագահութեամբ 1959ի Յունուար 16ին, ճանչցնելու համար Իրանահայութեան՝ Միաբանութեան պանծալի անցեալը հայ մշակոյթին հանդէպ ունեցած անդնահատելի ծառայութիւններով։

ԳԵՐԱՊ. ՍՐԱՊԻՈՆ Վ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆԻ

ՔՍԱՆ ԵՒ ՀԻՆ ԳԱՄԵԱՅ ԱՐԲԱՅՈՒԹԵԱՆ
ՅՈՒՆԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՆԵՐԸ

ԵՒ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարւոյ Օգոստոս 12ին Գերալդ Սրապիոն Վ. կը բոլորէր իր Արքեպիսկոպոսական ճաննահանգումն։

Քառորդ դարու իր իմաստուն եւ անձնուէր վարչութիւնը, իր հայրական սէրն եւ զոհողութիւնները եւ ձեռք բերած բազմազգի յաջողութիւնները նուիրական պարտականութիւն կը դնէին Միաբանութեան վրայ խանդավառութեամբ տօնելու այս յորեկանը՝ որպէս ցոյց որդիական սիրոյ եւ մեծարանքի։

Աւելորդ է շեշտել հոս դժուարութիւնները իր բարձր պաշտօնին՝ որուն հոգեւին կը լծուէր 1935 տարւոյ Օգոստոս 12ին, երբ ժողովական հայրերը միաձայն հաւանութեամբ զինքը կ'ընտրէին առաջնորդ Միւթարեան Միաբանութեան։

Իր խորին հաւատքը, իր արի հոգին եւ բարեխառն նկարագիրը մեծագոյն գրաւականներն եղան իր յաջող գործունէութեան՝ շարունակելով իրաւորել վանական շիմադրին սուրբ կտակը, առաքելականքի սրբութեան, զբաղման մէջ։

Նախորդ էջերուն մէջ արդէն երկար խօսուած է յորեկանը Արքեպիսկոպոսի զործունէութեան եւ ունեցած յաջողութիւններուն վրայ՝ որոնք կը հրճուէին Միաբանութիւնն եւ ազգը միանգամայն, եւ ամէնուն սրտէն կը բարձրանայ դէպի երկինք զոհութեան եւ օրհնութեան երգը՝ «Երաւորդ»։

Օգոստոս 13ն է։ Ս. Ղազար տենդադին պատրաստութեան մէջ է յորեկանին որ պիտի կատարուի վաղը՝ Տիրամօր հրաշափառ վերափոխման տօնին օրը։

Եւ ահա միջօրէին մօտ վանք կը հասնի վանեւորիկ Ամեն. Ծիր. Պատրիարք Յովհաննէս Ուրպանի, եւ հաւաքելով վանական հասարակութիւնը ամենամեծ զոհունակութեամբ կ'աւետէ թէ Ս. Քահանայապետը Արքեպիսկոպոս անուանած է յապետը Արքեպիսկոպոս։

Ո՞վ կրնայ երեւակայել անակնկալ աւետիսին առթած անհուն հրճուանքը որ կ'ողողէ բոլոր սրտերը, մինչ զանդակներու ուրախ զօղանքը ալիք ալիք կը սուրայ մինչեւ հեռաւոր աշխարհներ հաղորդակից ընելու Միաբանութեան ուրախութեան բոլոր բարեկամ սրտերը։

Պատրիարքը առաջինը կ'ըլլար որ իր սրտեանդն մաղթանքները կ'ընէր Գերալդ Արքեպիսկոպոսի, եւ սա իր կարգին յուզուած շեշտով խորին շնորհակալութիւն կը յայտնէր Ծիրանաւոր պատգամաւորին, իրենց ծիրանաւոր պատգամաւորին Ս. Քահանայապետին մօտ իր ամենախորին երախտագրութեան՝ այս բարձր շնորհին հատկութեան՝ այս բարձր շնորհին համար զոր ըրած էր ի նշան իր յատուկ սիրոյն եւ գնահատութեան հանդէպ Միաբանութեան եւ իր անձին։

Յաջորդ առաւօտ Յորեկանը կը բացուէր հանդիսաւոր ճանաւորով, զոր կը մատուցանէր Գերալդ Արքեպիսկոպոսը հոգեկան